# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

***ք. Երևան***

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2022թ. սեպտեմբերի 29-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

| | |
|---|---|
| Կարեն Հովհաննիսյան | Կոմիտեի նախագահ |
| Բաբկեն Ղալոյան | Կոմիտեի անդամ |
| Տիգրան Իսրաելյան | Կոմիտեի անդամ |
| Հայկուհի Ռշտունի | Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար |

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 4-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածովև Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **12.09.2022թ-ի «Փյունիկ»-«ԲԿՄԱ» (ՊԼ-032) խաղի ժամանակահատվածում «ԲԿՄԱ» թիմի մարզիչ Ռաֆայել Նազարյանի կողմից վիրավորական արտահայտություններ թույլ տալու վերաբերյալ:**

***Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝***

Հաստատված համարել «ԲԿՄԱ» թիմի մարզիչ Ռաֆայել Նազարյանի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ

հոդվածի 37-րդ կետը՝ «ԲԿՄԱ» թիմի մարզիչ Ռաֆայել Նազարյանին որակազրկել մինչև ս.թ. հոկտեմբերի 9-ը ներառյալ և «ՀՖՖ Տեխնիկական կենտրոն-Ակադեմիա»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի՝ 150.000 ՀՀ դրամի չափով:

2. **22.09.2022թ-ի «Ակադեմիա-1-09»-«Վանաձոր-08» (15A-002) խաղի ժամանակահատվածում երկրպագուների կողմից մրցավարների նկատմամբ անհարգալից արարք թույլ տալը (վեճի բռնվելը):**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Ակադեմիա-1-09» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 22-րդ կետը՝ «ՀՖՖ Տեխնիկական կենտրոն-Ակադեմիա»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

3. **22.09.2022թ-ի «Փյունիկ-Մրգաշատ-09»-«Կողբ-Յունայթեդ-09» (14C2-004) խաղը սկսվել է 45 րոպե ուշացումով «Կողբ-Յունայթեդ-09» թիմի ուշ ներկայանալու պատճառով:**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Կողբ-Յունայթեդ-09» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 35-րդ կետը՝ «Կողբ ՄԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

4. **23.09.2022թ-ի «Մարտունի-10»-«Փյունիկ-2-10» (13U1-003) խաղը տեղի չունեցավ «Փյունիկ-2-10» թիմի խաղին չներկայանալու պատճառով:**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Փյունիկ-2-10» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Փյունիկ-2-10» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

5. **23.09.2022թ-ի «Շիրակ-3-09»-«Բենտոնիտ-Իջևան-09» (14C2-002) խաղը սկսվել է 1 ժամ 30 րոպե ուշացումով «Բենտոնիտ-Իջևան-09» թիմի ուշանալու պատճառով:**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Բենտոնիտ-Իջևան-09» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 35-րդ կետը՝ «Բենտոնիտ» ՖԱ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

6. **23.09.2022թ-ի «Արտաշատ-09»-«Արարատ-1-09» (14B-005) խաղը մեկնարկել է 30 րոպե ուշացումով՝ «Արարատ-1-09» թիմի նախախաղային տվյալների հետ կապված խնդիրների պատճառով:**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Արարատ-1-09» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 35-րդ կետը՝ «Արարատ» ՖԱ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

7. **24.09.2022թ-ի «Գանձասար-Երևան-07»-«Ակադեմիա 08» (16A-008) խաղի 51-րդ րոպեին՝ տուգանային հարված նշանակելուց հետո, «Ակադեմիա 08» թիմի ֆուտբոլիստ Հայկ Խաչատուրի Եպիսկոպոսյանը (34987) բռունցքով հարվածեց մրցակցին:**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Ակադեմիա 08» թիմի ֆուտբոլիստ Հայկ Խաչատուրի Եպիսկոպոսյանի (34987) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ «Ակադեմիա 08» թիմի ֆուտբոլիստ Հայկ Խաչատուրի Եպիսկոպոսյանին (34987) որակազրկել 3 խաղով և «ՀՖՖ Տեխնիկական կենտրոն-Ակադեմիա»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

8. **24.09.2022թ-ի «Գանձասար-Երևան-07»-«Ակադեմիա 08» (16A-008) խաղի ժամանակահատվածում «Գանձասար-Երևան-07» թիմի ֆուտբոլիստ Գոռ Կարենի Ղազարյանի (3420) կողմից մրցավարի հասցեին վիրավորական արտահայտություններ թույլ տալու վերաբերյալ:**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Գանձասար-Երևան-07» թիմի ֆուտբոլիստ Գոռ Կարենի Ղազարյանի (3420) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետը՝ «Գանձասար-Երևան-07» թիմի ֆուտբոլիստ Գոռ Կարենի Ղազարյանին (3420) որակազրկել 4 խաղով և «Գանձասար» ՖԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկի՝ 15.000 ՀՀ դրամի չափով:

9. **24.09.2022թ-ի «Գանձասար-Երևան-07»-«Ակադեմիա 08» (16A-008) խաղի ժամանակահատվածում մարզադաշտում կարգ ու կանոն չապահովելու (թիմերի, այնուհետև թիմերի ծնողների միջև տեղի ունեցած միջադեպի) վերաբերյալ:**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Գանձասար-Երևան-07» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 22-րդ կետը՝ «Գանձասար» ՖԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի՝ 30.000 ՀՀ դրամի չափով:

**10. 24.09.2022թ-ի «Շիրակ-07»-«Միկա-07» (17A-008) խաղի ժամանակահատվածում երկրպագուների կողմից մրցավարների հասցեին վիրավորական արտահայտություններ թույլ տալու, մարզադաշտում կարգ ու կանոն չապահովելու վերաբերյալ:**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Շիրակ-07» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 22-րդ կետը՝ «Շիրակ» ՖԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի՝ 30.000 ՀՀ դրամի չափով:

**11. 09.09.2022թ-ի «Լեռնային Արցախ»-«Արարատ» (ՊԼ-033) խաղի ավարտին մոտ գնդակ մատակարարող երեխաների մոտ բավարար քանակով գնդակ չլինելու վերաբերյալ:**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Լեռնային Արցախ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Լ. Արցախ ՖԱ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով:

**12. 09.09.2022թ-ի «Արարատ-Արմենիա»-«Նոա» (ՊԼ-034) խաղի ժամանակահատվածում «Արարատ-Արմենիա» թիմի երկրպագուների կողմից ճայթրուկներ կիրառելու վերաբերյալ:**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

*1)* Հաստատված համարել «Արարատ-Արմենիա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 22-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի՝ 150.000 ՀՀ դրամի չափով:
*2)* Հաստատված համարել «Արարատ-Արմենիա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 22-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով:

**13. 12.09.2022թ-ի «Փյունիկ»-«ԲԿՄԱ» (ՊԼ-032) խաղի ժամանակահատվածում տոմսային համակարգի բացակայության վերաբերյալ:**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Փյունիկ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 74-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով։

Կոմիտեի նախագահ՝

_____

անդամներ՝

_____

_____

_____

_____